«Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքս»

«Հերիթիջ» հիմնադրամը (Heritage Foundation) 2010 թվականի հունվարի 12-ին Հայաստանը գնահատել է որպես ազատականացված գործարար միջավայր ունեցող երկիր (տե՛ս աղյուսակ 1): «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքս» հետազոտությունում դիտարկված աշխարհի 183 երկրների շարքում Հայաստանը 38-րդ տեղում է՝ նախորդ տարվա 31-րդ տեղի փոխարեն, որը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ, նկատենք, որ տեղաշարժ է կատարվել աշխարհի երկրների տնտեսական ազատության ինդեքսների մակարդակներում, և 2010 թ-ին ինը երկրներ՝ Սենտ Լյուսիան, Վրաստանը, Թայվանը, Բոտսվանան, Հարավային Կորեան, Սալվադորը, Ուրուգվայը, Չեխիան և Սլովակիան առաջ են անցել, իսկ երկու երկրներ՝ Բարբադոսն ու Բահամյան Կղզիները հետ են ընկել Հայաստանից իրենց տնտեսական ազատության գնահատականով: Բացի այդ, Հայաստանի 2010 թ. տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 միավորով, քանի որ փոփոխություններ են կատարվել դրա հիմքը հանդիսացող առանձին գործոններում (տե՛ս աղյուսակ 3): Այսպես, 2009թ. համեմատ բարելավվել են ***ներդրումների ազատության, աշխատանքի ազատության*** և ***կառավարության չափի*** գնահատականները, անփոփոխ է մնացել ***ֆինանսական ազատության*** գնահատականը և վատացել են ***առևտրի ազատության, սեփականության իրավունքի պաշտպանության, դրամավարկային ազատության, կոռուպցիայից ազատության,***

հարկաբյուջետային ազատության, գործարարության ազատության գնահատականները: Մասնավորապես,

- «Առևտրի ազատություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 5.9 միավորով և կազմել է 80.5 միավոր: «Հերիթիջի» փորձագետները Հայաստանի համար այս գործոնի գնահատականը պակասեցրել են 15 միավորով, այսինքն՝ այն կարող էր լինել 95.5 միավոր: Հայաստանի «Առևտրի ազատության» գնահատականի իջեցումը, ըստ «Հերիթիջի» փորձագետների, պայմանավորված է այն հանգամանքով, որ «ակցիզային հարկերն ու վճարները, ոչ համապատասխան ենթակառուցվածքը, մաքսային արժեքների որոշման անկանխատեսելիությունը, մաքսային վարչարարության անբավարար մակարդակը, սեփականության իրավունքների թույլ պաշտպանվածությունը, ներմուծման մենիշխանությունները և կոռուպցիան ավելացնում են առևտրի ծախքերը»[1]:
- «Սեփականության իրավունքի պաշտպանություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 5.0 միավորով և կազմել 30.0 միավոր: «Հերիթիջի» փորձագետները այս գործոնի բավականին ցածր գնահատականը բացատրում են այն հանգամանքով, որ, Միջազգային սեփականության իրավունքի 2009 թ. ինդեքսի (International Property Rights Index (IPRI)) ցուցանիշով Հայաստանը աշխարհի 118 երկրների թվում զբաղեցնում է 98-րդ տեղը: «Հերիթիջի»

[1] *Աղբյուրը՝ **The link between Economic Opportunity & Prosperity**: **The 2010 Index of Economic Freedom**/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 94 <http://www.heritage.org>:*

փորձագետները ավելացնում են, որ դատական համակարգը դեռևս փորձում է հաղթահարել խորհրդային ժամանակներից ժառանգած թերզարգացածությունը և կոռուպցիան, որոնք զգալիորեն խոչընդոտում են պայմանագրերի կիրարկմանը:

- Նախորդ տարվա համեմատ Հայաստանի «Դրամավարկային ազատություն» գործոնի գնահատականի՝ 4.9 միավորով վատացման պատճառը նախ, 2005 – 2007 թթ. համեմատ (3.7%) 2006 - 2008թթ. միջին կշռված գնաճի բարձր մակարդակն էր (7.3%), որը պայմանավորված էր 2007թ-ին Հայաստանում միջին տարեկան գնաճի 4.4% և 2008թ-ին՝ 9% մակարդակներով: 2007-2008 թթ., նախորդ տարիների համեմատ, Հայաստանում բարձր գնաճը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների, այդ թվում՝ հացամթերքի, մսամթերքի, կենդանական և բուսական յուղի գների աճով, ինչպես նաև ծառայությունների, այդ թվում՝ բուժսպասարկման, կրթության համակարգի և տրանսպորտի ծառայությունների սակագների աճով: Նկատենք, որ «Հերիթիջ» հիմնադրամի կողմից դիտարկված 183 երկրների «Դրամավարկային ազատություն» գործոնի 2010 թ. միջին գնահատականը նույնպես նվազել է նախորդ տարվա համեմատ (3.4%-ով)՝ պայմանավորված 2007 թ. հունիսից մինչև 2008 թ. կեսերը հանքահումքային և պարենային մթերքների համաշխարհային գների աճով: Ինչ վերաբերում է երկրորդ ենթագործոնին, նշենք, որ 2007 թ-ից «Հերիթիջ» հիմնադրամը փոխել է «Դրամավարկային ազատություն» գործոնի գնահատման մեթոդաբանությունը և, ի լրումն վերջին երեք տարիների միջին կշռված գնաճի ցուցանիշի, այդ գործոնի ընդհանուր գնահատականից հանում է 0-ից մինչև 20 միավոր՝ կախված տվյալ երկրում կառավարության լրահատկացումների և գների

- «Կոռուպցիայից ազատություն» գործոնի գնահատականի հիմքում դրվել է «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման» 2008թ. ինդեքսը, որով Հայաստանը աշխարհի 179 երկրների թվում գրավում էր 109-րդ տեղը: Այս առումով նկատենք, որ «Կոռուպցիայի ընկալման» 2009 թ. ինդեքսը ՀՀ-ում զգալի վատացել է, և աշխարհի 180 երկրների թվում Հայաստանը գրավել է 120-րդ տեղը: Հետևաբար, սպասվում է, որ «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության» 2011թ. ինդեքսում «Կոռուպցիայից ազատություն» գործոնի գծով Հայաստանի գնահատականը ավելի կվատանա: Բացի այդ, ըստ «Հերիթիջի» փորձագետների, Հայաստանում «կոռուպցիան լայն տարածում ունի բոլոր մակարդակներում և բոլոր հատվածներում: Պետական պաշտոնյաների կողմից կաշառք պահանջելը դիտարկվում է որպես լայնորեն ընդունված պրակտիկա: Կառավարության հետ կապված ձեռնարկչատիրությունը մենիշխանություն ունի բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման ոլորտներում»[2:]

[2] *Աղբյուրը՝* ***The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 94:*

- «Հարկաբյուջետային ազատություն» և «Գործարարության ազատություն» գործոնների գնահատականները նախորդ տարվա համեմատ վատացել են աննշան չափով՝ պայմանավորված դրանց հետ կապված հաշվարկների ճշգրտմամբ:

«Հերիթիջի» փորձագետները բարձր են գնահատել անցած տասնամյակում Հայաստանում իրականացված տնտեսական բարեփոխումները, որոնք նպաստել են եկամուտների աճին և աղքատության կրճատմանը՝ մակրոտնտեսական կայունության պայմաններում: Հարկային ցածր դրույքաչափը և Կառավարության ծախսերի չափավոր մակարդակը պայմանավորել են «Հարկաբյուջետային ազատություն» գործոնի բարձր գնահատականը: «Հերիթիջի» փորձագետների կարծիքով, Հայաստանի տնտեսական ազատության գնահատականի հետագա բարձրացման համար դեռևս զգալի անելիքներ կան երկրում, որոնցից առավել կարևորվում են լայն տարածում ունեցող կոռուպցիայի հաղթահարումը և սեփականության իրավունքի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Հայաստանում կոռուպցիայի մասին նշվել է, որ «առանձին պետական պաշտոնյաների բյուրոկրատական գործողությունները և կայացվող հայեցողական որոշումները խրախուսում են մանր կոռուպցիան, իսկ դանդաղ ընթացող կառուցվածքային բարեփոխումները դեռևս չեն ապահովում Հայաստանի արտադրողական բազայի բազմազանեցումը»[3]:

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից),

[3] *Աղբյուրը՝* ***The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 93:*

այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 3):

Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Էստոնիային, Լիտվային, Վրաստանին, Չեխիային և Սլովակիային (տե՛ս աղյուսակ 1):

«Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքսի» հիմքում ընկած 10 գործոններից 8-ով Հայաստանը գերազանցում է աշխարհի 183 երկրների միջին ցուցանիշը: Հայաստանը զիջում է աշխարհի 2010թ. միջին ցուցանիշին միայն «Սեփականության իրավունքի պաշտպանության» և «Կոռուպցիայից ազատության» գնահատականներով:

Տնտեսական ազատության ինդեքսով Հայաստանից զգալիորեն հետ է մնում Մերձբալթյան երկրներից Լատվիան, որը զբաղեցնում է 50-րդ տեղը: ԱՊՀ երկրներից հաջորդը Ղրղզստանն է, որը ներկայումս զբաղեցնում է 80-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1):

Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում Հայաստանը 2010թ. գրավել է 21-րդ տեղը՝ նախորդ տարվա 18-րդ տեղի փոխարեն, իսկ Վրաստանը զբաղեցնում է 14-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (69.2 միավոր) բարձր է եվրոպական տարածաշրջանի միջինից (66.8 միավոր):

Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «չափավոր ազատ» երկրների շարքն են դասվում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ Խորվաթիայի, Սերբիայի, Բոսնիա և

Հերցեգովինայի, որոնք ներկայումս դասվում են «հիմնականում ոչ ազատ» երկրների թվին: Տնտեսապես «չափավոր ազատ» երկրների թվին են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Լատվիան, Ղրղզստանը և Ղազախստանը (տե՛ս աղյուսակ 1): 2010 թ. տնտեսական ազատության ինդեքսով Վրաստանը դասվում է «հիմնականում ազատ» երկրների շարքը:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, եվրոպական տարածաշրջանի երկրների 2010 թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները, ինչպես նաև Հայաստանի 1996-2010թթ. և հարավկովկասյան երկրների 2007-2010 թթ. ինդեքսները, ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատման, ներկայացված են աղյուսակներ 1-4-ում:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների[4] (2010 թվական)

Աղյուսակ 1

Երկրի դիրքը աշխարհի 183 երկրների շարքում	Երկիր	Գնահատականներ					2010 թ. գնահատականն ըստ առանձին գործոնների									
		2010	2009	2008	2007	2006	Սեփականության իրավունքներ	Կոռուպցիա	Հարկային բեռ	Կառավարության ծախսեր	Գործարար ազատություն	Աշխատանքի շուկայի ազատություն	Դրամավարկային քաղաքականություն	Առևտրային ազատություն	Ֆինանսական ազատություն	Կապիտալի շուկայի ազատություն
16	Էստոնիա	74.7	76.4	77.9	78.0	74.9	83.1	87.5	80.2	62.2	71.1	90.0	80.0	80.0	66.0	47.0
26	Վրաստան	70.4	69.8	69.2	69.3	64.5	87.9	89.1	89.1	65.3	70.2	70.0	60.0	40.0	39.0	93.7
29	Լիտվա	70.3	70.0	70.9	71.5	71.8	82.0	87.5	84.6	63.5	70.8	75.0	80.0	55.0	46.0	58.5
34	Չեխիա	69.8	69.4	68.1	67.4	66.4	65.5	87.5	80.1	45.6	75.6	70.0	80.0	65.0	52.0	76.4
35	Սլովակիա	69.7	69.4	70.0	69.6	69.8	72.6	87.5	84.0	64.5	78.2	70.0	70.0	55.0	50.0	65.1
38	Հայաստան	69.2	69.9	69.9	68.6	70.6	83.4	80.5	89.3	90.9	72.9	75.0	70.0	30.0	29.0	70.6
50	Լատվիա	66.2	66.6	68.3	67.9	66.9	72.9	87.5	82.7	57.4	67.0	80.0	50.0	55.0	50.0	59.1
51	Հունգարիա	66.1	66.8	67.6	64.8	65	76.8	87.5	68.6	25.9	74.1	75.0	70.0	65.0	51.0	67.6
53	Ալբանիա	66.0	63.7	62.4	61.4	60.3	68.0	85.8	92.6	74.2	78.7	70.0	70.0	35.0	34.0	52.1
56	Մակեդոնիա	65.7	61.2	61.1	60.6	59.2	65.2	83.3	89.3	65.9	79.0	60.0	60.0	35.0	36.0	83.1
61	Սլովենիա	64.7	62.9	60.2	59.6	61.9	83.3	87.5	64.0	46.1	76.0	70.0	50.0	60.0	67.0	43.5

[4] *Աղյուսակում ներկայացված են 2006-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսների» «Հերիթիջ» հիմնադրամի կողմից վերահաշվարկված գնահատականները: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:*

63	Ռումինիա	64.2	63.2	61.7	61.2	58.2	72.5	87.5	85.8	59.8	73.3	75.0	50.0	40.0	38.0	60.4
68	Մոնտենեգրո	63.6	58.2	_	_	_	70.1	83.2	90.0	54.4	73.2	55.0	50.0	40.0	34.0	86.4
71	Լեհաստան	63.2	60.3	60.3	58.1	59.3	62.2	87.5	74.9	46.8	78.1	60.0	60.0	55.0	46.0	61.5
75	Բուլղարիա	62.3	64.6	63.7	62.7	64.1	77.8	87.4	86.3	48.3	69.5	50.0	60.0	30.0	36.0	78.1
80	Ղրղզստան	61.3	61.8	61.1	60.2	61.0	76.6	75.9	92.9	80.2	62.2	50.0	50.0	25.0	18.0	82.6
82	Ղազախստան	61.0	60.1	61.1	59.6	60.2	73.5	85.9	87.9	82.1	65.6	30.0	50.0	30.0	22.0	83.1
92	Խորվաթիա	59.2	55.1	54.1	53.4	53.6	61.5	87.8	70.3	47.1	75.8	65.0	60.0	40.0	44.0	40.8
96	Ադրբեջան	58.8	58.0	55.3	54.6	53.2	74.6	77.1	79.5	77.5	62.7	55.0	40.0	20.0	19.0	82.5
104	Սերբիա	56.9	56.6	_	_	_	58.9	75.2	83.2	41.4	64.5	50.0	50.0	40.0	34.0	72.2
110	Բոսնիա և Հերցեգովինա	56.2	53.1	53.9	54.4	55.6	61.3	80.8	83.2	28.8	74.7	70.0	60.0	10.0	32.0	61.2
125	Մոլդովա	53.7	54.9	57.9	58.7	58.0	70.2	79.9	85.1	43.0	67.5	30.0	50.0	40.0	29.0	42.7
128	Տաջիկստան	53.0	54.6	54.4	53.6	52.6	57.4	82.5	88.9	78.0	58.4	25.0	40.0	25.0	20.0	54.4
143	Ռուսաստան	50.3	50.8	49.8	52.2	52.4	52.2	68.4	82.3	66.5	62.6	25.0	40.0	25.0	21.0	59.6
150	Բելառուս	48.7	45.0	45.3	47.0	47.5	72.1	80.3	85.2	32.0	62.6	20.0	10.0	20.0	20.0	84.8
158	Ուզբեկստան	47.5	50.5	51.9	51.5	48.7	67.8	65.1	88.4	72.6	62.4	10.0	10.0	20.0	18.0	61.1
162	Ուկրաինա	46.4	48.8	51.0	51.5	54.4	38.7	82.6	77.9	41.1	61.2	20.0	30.0	30.0	25.0	57.7
171	Թուրքմենստան	42.5	44.2	43.4	43.0	43.8	30.0	79.2	90.2	94.7	62.8	0.0	10.0	10.0	18.0	30.0

Եվրոպական տարածաշրջանի երկրների տնտեսական ազատության գնահատականները ըստ «Հերիթիջ» հիմնադրամի (2010 թվական)

Աղյուսակ 2

Երկրի դիրքը աշխարհի 183 երկրների շարքում	Դիրքը տարածաշրջանի 43 երկրների շարքում	Երկիրը	2010 թ. գնահատականը	Փոփոխությունը 2009 թ. համեմատությամբ	2010 թ. գնահատականն ըստ գործոնների									
					Սեփականության իրավունքը	Կոռուպցիան	Աշխատանքի ազատությունը	Առևտրի ազատությունը	Ծախսերի ազատությունը	Հարկային բեռը	Պետական ծախսերը	Դրամավարկային քաղաքականությունը	Ձեռնարկատիրական գործունեության ազատությունը	Առևտրային արգելքները
5	1	Իռլանդիա	81.3	-0.9	92.8	87.5	71.1	61.8	79	95	80	90	77	79.1
6	2	Շվեյցարիա	81.1	1.7	81.2	90	68.2	68.9	81.3	80	80	90	90	81.8
9	3	Դանիա	77.9	-1.7	97.9	87.5	35.9	22	79.3	90	90	90	93	93.7
11	4	Անգլիա	76.5	-2.5	94.9	87.5	61.8	41.9	73.7	90	80	85	77	72.8
14	5	Լյուքսեմբուրգ	75.4	0.2	75.1	87.5	65.9	58.5	78.9	95	80	90	83	40.4
15	6	Նիդեռլանդներ	75.0	-2.0	82.6	87.5	52	38.4	81	90	80	90	89	59.1
16	7	Էստոնիա	74.7	-1.7	83.1	87.5	80.2	62.2	71.1	90	80	80	66	47
17	8	Ֆինլանդիա	73.8	-0.7	95	87.5	65.4	32.9	78.9	75	80	90	90	43.8
18	9	Իսլանդիա	73.7	-2.2	93	87.9	75.4	45.8	69.9	65	60	90	89	60.8
21	10	Շվեդիա	72.4	1.9	95.5	87.5	36.7	17.3	79.5	85	80	95	93	54.9
22	11	Ավստրիա	71.6	0.4	73.6	87.5	51.2	28.8	79.3	75	70	90	81	79.1
23	12	Գերմանիա	71.1	0.6	89.6	87.5	58.3	41.4	79.9	85	60	90	79	39.9
24	13	Կիպրոս	70.9	0.1	80.3	82.5	72.7	44.8	82.9	70	70	80	64	61.5
26	14	Վրաստան	70.4	0.6	87.9	89.1	89.1	65.3	70.2	70	60	40	39	93.7
29	15	Լիտվա	70.3	0.3	82	87.5	84.6	63.5	70.8	75	80	55	46	58.5
30	16	Բելգիա	70.1	-2.0	92.9	87.5	42.2	30	77.9	80	70	80	73	67.1
34	17	Չեխիա	69.8	0.4	65.5	87.5	80.1	45.6	75.6	70	80	65	52	76.4
35	18	Սլովակիա	69.7	0.3	72.6	87.5	84	64.5	78.2	70	70	55	50	65.1
36	19	Իսպանիա	69.6	-0.5	75.8	87.5	58.1	54.8	77.7	80	80	70	65	47.3
37	20	Նորվեգիա	69.4	-0.8	88.8	89.2	50.5	49.8	74.2	65	60	90	79	47.1
38	21	Հայաստան	69.2	-0.7	83.4	80.5	89.3	90.9	72.9	75	70	30	29	70.6
48	22	Մալթա	67.2	1.1	70	87.5	62.5	45.6	78.1	70	60	80	58	60
50	23	Լատվիա	66.2	-0.4	72.9	87.5	82.7	57.4	67	80	50	55	50	59.1
51	24	Հունգարիա	66.1	-0.6	76.8	87.5	68.6	25.9	74.1	75	70	65	51	67.6
53	25	Ալբանիա	66.0	2.3	68	85.8	92.6	74.2	78.7	70	70	35	34	52.1
56	26	Մակեդոնիա	65.7	4.5	65.2	83.3	89.3	65.9	79	60	60	35	36	83.1
61	27	Սլովենիա	64.7	1.8	83.3	87.5	64	46.1	76	70	50	60	67	43.5
62	28	Պորտուգալիա	64.4	-0.5	80.5	87.5	61	37.1	79.7	70	60	70	61	37
63	29	Ռումինիա	64.2	1.0	72.5	87.5	85.8	59.8	73.3	75	50	40	38	60.4
64	30	Ֆրանսիա	64.2	0.9	86.3	82.5	51.9	17.9	79.7	50	70	80	69	54.7
67	31	Թուրքիա	63.8	2.2	68.9	86.4	78.1	82.9	70	65	50	50	46	41.1
68	32	Մոնտենեգրո	63.6	5.4	70.1	83.2	90	54.4	73.2	55	50	40	34	86.4
71	33	Լեհաստան	63.2	2.9	62.2	87.5	74.9	46.8	78.1	60	60	55	46	61.5
73	34	Հունաստան	62.7	1.9	77.4	82.5	65.9	41.9	77.6	60	60	60	47	55.1
74	35	Իտալիա	62.7	1.3	77.9	87.5	55.2	31.2	79	75	60	55	48	58.2
75	36	Բուլղարիա	62.3	-2.3	77.8	87.4	86.3	48.3	69.5	50	60	30	36	78.1
92	37	Խորվաթիա	59.2	4.1	61.5	87.8	70.3	47.1	75.8	65	60	40	44	40.8
104	38	Սերբիա	56.9	0.3	58.9	75.2	83.2	41.4	64.5	50	50	40	34	72.2
110	39	Բոսնիա և Հերցեգովինա	56.2	3.1	61.3	80.8	83.2	28.8	74.7	70	60	10	32	62.1
125	40	Մոլդովա	53.7	-1.2	70.2	79.9	85.1	43	67.5	30	50	40	29	42.7
143	41	Ռուսաստան	50.3	-0.5	52.2	68.4	82.3	66.5	62.6	25	40	25	21	59.6
150	42	Բելառուս	48.7	3.7	72.1	80.3	85.2	32	62.6	20	10	20	20	84.8
162	43	Ուկրաինա	46.4	-2.4	38.7	82.6	77.9	41.1	61.2	20	30	30	25	57.7

Հայաստանի «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (1996-2010 թվականներ) [5]

Աղյուսակ 3

	2010	2009	2008	2007	2006	2005	2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996
Երկրների թիվը	**183**	**179**	**157**	**157**	**157**	**155**	**155**	**157**	**157**	**155**	**161**	**161**	**156**	**150**	**142**
Երկրի դիրքը	**38**	**31**	**30**	**34**	**27**	**25**	**23**	**37**	**32**	**46**	**62**	**97**	**117**	**123**	**125**
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ															
1. Գործարարության ազատությունը	83.4	83.7	81.3	80.8	77.6	55	55	55	55	55	55	55	55	55	55
2. Առևտրի ազատությունը	80.5	86.4	85.0	85.6	80.6	80.0	80.0	81.2	81.4	77.0	77.0	75.0	75.0	83.0	69.0
3. Հարկաբյուջետային ազատությունը	89.3	90.0	89.0	89.7	90.0	89.9	90.0	88.9	88.3	81.9	79.3	80.3	80.9	80.7	75.8
4. Կառավարության չափը	90.9	89.7	86.4	90.8	90.7	88.9	88.7	84.1	81.3	85.5	86.8	82.1	75.1	41.7	0.0
5. Դրամավարկային ազատությունը	72.9	77.8	84.6	80.3	80.6	82.0	84.5	81.7	91.1	77.8	69.1	55.5	0.0	0.0	0.0
6. Ներդրումների ազատությունը	75.0	70.0	70	60	70	70	70	70	70	70	50	30	30	30	30
7. Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70	70	70	90	90	70	70	70	70	50	50	50	50
8. Սեփականության իրավունքը	30.0	35.0	35	30	50	50	50	50	50	50	50	50	50	50	50
9. Կոռուպցիայից ազատությունը	29.0	30.0	29	29	31	30.0	25.0	25.0	25.0	30	30	30	30	30	50
10. Աշխատանքի ազատությունը	70.6	66.3	68.2	70.3	65.3	62.1	_	_	_	_	_	_	_	_	_
«Տնտեսական ազատության ինդեքսը»	69.2	69.9	69.9	68.6	70.6	69.8	70.3	67.3	68.0	66.4	63.0	56.4	49.6	46.7	42.2

[5] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 1996-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ տարբեր տարիներին Հայաստանի դիրքի փոփոխության: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:

Հարավկովկասյան երկրների «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (2007-2010 թվականներ) [6]

Աղյուսակ 4

		ՀԱՅԱՍՏԱՆ				ՎՐԱՍՏԱՆ				ԱԴՐԲԵՋԱՆ			
		2010	2009	2008	2007	2010	2009	2008	2007	2010	2009	2008	2007
Երկրների թիվը		**183**	**179**	**157**	**157**	**183**	**179**	**157**	**157**	**183**	**179**	**157**	**157**
Երկրի դիրքը		**38**	**31**	**30**	**34**	**26**	**32**	**32**	**31**	**96**	**99**	**105**	**111**
	ԳՈՐԾՈՆՆԵՐԸ												
1.	Գործարարության ազատությունը	83.4	83.7	81.3	80.8	87.9	86.6	85.0	80.8	74.6	74.6	62.6	58.0
2.	Առևտրի ազատությունը	80.5	86.4	85.0	85.6	89.1	80.6	71.0	71.8	77.1	78.4	78.4	77.6
3.	Հարկաբյուջետային ազատությունը	89.3	90.0	89.0	89.7	89.1	86.8	90.7	91.2	79.5	79.7	80.4	80.8
4.	Կառավարության չափը	90.9	89.7	86.4	90.8	65.3	74.6	81.3	88.4	77.5	77.5	82.9	79.9
5.	Դրամավարկային ազատությունը	72.9	77.8	84.6	80.3	70.2	70.9	71.4	77.8	62.7	66.3	76.5	76.8
6.	Ներդրումների ազատությունը	75.0	70.0	70	60	70.0	70.0	70	60	55.0	30.0	30	30
7.	Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70	70	60.0	60.0	60	70	40.	40.0	30	30
8.	Սեփականության իրավունքը	30.0	35.0	35	30	40.0	35.0	35	30	20.0	25.0	30	30
9.	Կոռուպցիայից ազատությունը	29.0	30.0	29	29	39.0	34.0	28	23	19.0	21.0	24	22
10.	Աշխատանքի ազատությունը	70.6	66.3	68.2	70.3	93.7	99.4	100.0	99.9	82.5	87.0	58.7	60.8
	«Տնտեսական ազատության ինդեքսը»	69.2	69.9	69.9	68.6	70.4	69.8	69.2	69.3	58.8	58.0	55.3	54.6

[6] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 2007-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքերի փոփոխության: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls: